ՆՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
Հատոր 2, համար 2, 2008թ.
www.ysmu.am

ՄԱՅՐԵՐԻ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊՐԱԿՏԻԿ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ՝ ԿՐԾՔՈՎ ՕՊՏԻՄԱԼ ԿԵՐԱԿՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ամիխանյան Ե. Է.

Հայաստանի ամերիկյան համալսարանի հասարակական առողջապահության ֆակուլտետ, Երևան, Հայաստան

Բազմակողմանի հետազոտությունները ցույց տվեցին, որ կրծքով կերակրումը օգտակար է ինչպես մոր, այնպես էլ երեխայի համար: 1993 թ-ին ՀՀ ԱՆ սկսեց կրծքով կերակրման պրոպագանդայի ազգային ծրագիր: Ծրագրի գործունեության արդյունքում 2000 թ. միայն կրծքի կաթով կերակրվող երեխաների տոկոսն աճեց մինչև 60 %՝ համեմատած 1993 թ. 23%-ի հետ: ՀՀ ամերիկյան համալսարանի հասարակական առողջապահության ֆակուլտետի ուսանողները, 2003 թ. մայրերի և բժշկական աշխատողների շրջանակներում, անցկացրեցին «Հետազոտության որակյալ մեթոդներ» հարցում: Տվյալ հետազոտությունը հանդիսանում է տվյալների երկրորդային անալիզ՝ ստացված վերոնշյալ հարցումների արդյունքում: Այս հետազոտության խնդիրն էր՝ գնահատել մայրերի և բժշկական աշխատողների գիտելիքներ/կարծիքները՝ կրծքով օպտիմալ կերակրման վերաբերյալ և հետազոտել կրծքով կերակրման պրակտիկան՝ «Baby Friendly» սերտիֆիկացված և ոչ սերտիֆիկացված ծննդատներում:

Բազմափուլ կլաստեր քաղվածքի ուղով նույնացվել են մինչև 2 տարեկան երեխա ունեցող Երևանում ապրող 86 մայրեր, 81 բժշկական աշխատողներ, մանկաբույժներ, բուժքույրեր՝ աշխատող Երևանի թաղամասային մանկական պոլիկլինիկաներում:

Հետազոտությունների արդյունքները վկայում են կրծքով օպտիմալ կերակրման գիտելիքների բավականին բարձր մակարդակի մասին, սակայն այդ գիտելիքները միշտ են օգտագործվում պրակտիկայում: Սննդի/հեղուկների հավելյալ ներմուծումը սննդակարգ, շատ լայն տարածված է մայրերի և բժշկական աշխատողների մոտ: Սերտիֆիկացված ծննդատները ցուցադրեցին լավագույն, սակայն կրծքով կերակրման ոչ կատարյալ պրակտիկա: Կանանց կոնսուլտացիաներում ոչ բավարար են օգտագործում մինչծծդաբերական խորհրդատվությունը՝ կրծքով օպտիմալ կերակրման ինֆորմացիա հատկացնելու համար:

OFFICIAL PUBLICATION OF THE YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY